



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՊԱՇՏՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1884 ԱՄԿՆ

ՆԻՍՏ ԺԹ.

8 ՄԱՏ 1885




Կ. ՊՕԼԻՍ

1885

# ԴԻԻԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԱՅ

## ՄԱՅԲ ԳԻԻԱՆ

Տիրքան	Էֆէնտի	Եռսուֆեան	Ա. Արեւելեք
Քրիստոստուր	»	Ղազարոսեան	Բ. »
Յովհաննէս	»	Թորոսեան	Գ. »
Յակոբ	»	Պօլնակեան	Ա. Արեւելեք
Ստեփան	»	Տամատեան	Բ. »
			Գ. »



### Ձեռնաստրեան Գիւան

Մաաթէոս Եսկ. Իզմիրլեան Արեւելեք  
 Գարեգին Վրդ. Թաթարեան  
 Մարկոս Էֆէնտի Ազարեգեանց

### Դաստիարակութեան Գիւան

Ռէթէոս Էֆ. Պերպէրեան Արեւելեք  
 Գէորգ » Ապտուլլահ  
 Միքայէլ » Մամիկոնեան

### Կայուածոց Գիւան

Քրիստոս Էֆ. Ղազարոսեան Արեւելեք  
 Յակոբ » Եէմէնիճեան  
 Պօղոս » Թորգոմեան

### Համարախորեան Գիւան

Կարապետ Էֆ. Սըվաճեան Արեւելեք  
 Մկրտիչ » Ճանրմեան  
 Գառնիկ » Յովակիմեան

### Յարօրէնութեան Գիւան

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Արեւելեք  
 Ռուբէն » Պուլիւրեան  
 Վիշէն » Օրմանեան

### Իրաւաստեան Գիւան

Գարրիէլ Էֆ. Նորատունկեան Արեւելեք  
 Յովհաննէս Քէյ. Մկրեան  
 Յակոբ Էֆէնտի Արշակ

### Նախանեռութեան Գիւան

Մէնաս Էֆէնտի Ջերաղ Արեւելեք  
 Յովհաննէս » Արշակունի  
 Նշան » Պօյաճեան

### Իմբարտութեան Գիւան

Կարապետ Էֆ. Իւթիւճեան Արեւելեք  
 Հաբարձուժ » Ալաճաճեան  
 Յակոբ » Գուրգէն

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄՆ 1884 ԱՄԻ

ՆԻՍՏ ԺԹ.

8 ՄԱՐՏ 1885

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ (առեւտրայ)  
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եուսուֆեան.

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. — Ատենական գործողութիւնք.
- Բ. — Խնդիր Պատգամաւորութեան վասն Կաթողիկոսական ընտրութեան.

Ընդ առժամեայ Նախագահութեամբ Գեր. Տէր Խորէն Արքեպիսկոպոս Նար-պէյի, Ատենապետ էֆէնտի ատեանն կը բանայ ժամը կին 'ի ներկայութեան 32 Երեւոյթանայ, որոց թիւն 'ի վերջէ 38ի կը յանդի:

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԻՆԻ

1.

Վաներացումն ժե. նստի ատենագրութեան.

Ատենապետ էֆէնտի Երեւոյթանայ զի տողութեանն կենթարկէ ժերդ. նստի տղա՝ զիր ատենագրութիւնը:

ԳՈՐԳԷՆ Յ. ԷՏ. — Իմ ընելիք զիտողութիւնս իմ խօսքերուն չ'վերաբերիր, այլ ուշադրութիւն պիտի հրաւիրեմ մասնաւոր կէտի մը վրայ, որ ըստ ինքեան մեծ կարեւորութիւն ունի:

Երես 373. Ա. սխեակ. ըսուած է «Սուրհենան էֆէնտի վերստին կը սնդէ իւր «սահանջման վրայ, սակայն Ատենապետ Էֆէն «տիի բացարձակ մերժմամբ կը մեկնի ժողովա «տեղիէն և այլն»: Սակայն հարկ է զիտնալ թէ մեկնողն ոչ թէ Ատենապետն էր, այլ Սուրհենան էֆէնտի. թէև տարբերութիւնն ի գրին վրայ է, բայց սէտք է ուղղել ըստ որում այդ զերն ամբողջ խօսքին իմաստն կրնայ շիտթել:

ՊՕՏԵՆԱԿԱՆ Յ. ԷՏ. — (Ատենադպիր) Լոկ տողագրական վրկակի մ'է այդ որ կրնայ ուշադրութենէ վրկակած ըլլալ:

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՅ. — Ասկից զատ, երես 375. Ա. սիւնակին մէջ ըսուած է թէ « մի բանի Երեսօրիսանք կընդմխեն զԱտենարան էֆէնտին » : Այս ընդմխող Երեսօրիսանայ մին ալ ես էի :

Յայտնի է թէ, նոյն օրն Պատրիարքի ընտրութենէն յետոյ, Մէրէէմ-Գուլի էֆէնտի բանաստութիւն մ'ըրուս, որոյ մի բանի կէտերուն դէմ բողոքեցինք և Ատենապետ էֆէնտին ևս յոյժ պատշաճապէս փութաց 'ի ձայն դանգակի 'ի կարգ կոչել զԱտենարանն, բայց փոխանակ մեր այդ բողոքներն արձանագրուելու, աղմուկը ըսուած է : Գիտնալ պէտք է թէ աղմուք և բողոք տարրեր բաներ են և հարկ էր ուրոյն ուրոյն արձանագրուել :

Կը խնդրեմ Դիւանէն արձանագրուել զիմ այս ղիտողութիւն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Անշուշտ կը յիշէ Գուրգէն էֆէնտին որ իւր յիշատակած պարագայն աղմուկ և շփոթութեանց մէջ տեղի ունեցած նոյն օրն, երբ կը պատրաստուէի փակել զԴիւանն, մանաւանդ թէ՛ մեր մէջ սղազրութիւն չ'իկնելով, բնական է թէ աղմուկ մէջ յամենուստ տեղի ունեցած զանազան ձայներն չէ կարելի արձանագրուել ամբողջովին :

Ուրիշ ղիտողութիւն չ'իկնելով, Ատենապետ էֆէնտի ժողովոյ ընդունելութեան կենթարկէ ժեռք. նստի ատենագրութիւնն, որ կը ՎԱՍԻՐԱՅՆԷ : Հանդերձ եղած ղիտողութեամբք :

( Յեք +սեբեդեան )

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Աւելորդ չեմ համարիր յայտնել ժողովոյ թէ՛ մեր ժ.Ձ. ժ.Է. և ժ.Ը. դումարմանց ատենագրութիւնք որք դանդաղ նիստերու կը վերաբերին, ի պատեհ ճտման միայն սխտի կրնան տրուիլ 'ի հրատարակութիւն :

2.)

ԸՅՏՐՈՒՐԻՒՆ Ի ՆՍԽԱՍՏԵՆՈՒՐԵԱՆ ԴԻՒԱՆԷ ԿԱԿԱՍԵԱՅ ՄԻ ԱՆՂԱՄԻ

ՁԵՐԱՋ Մ. ԷՅ. — Իբր Ատենապետ Նսխաստենութեան Դիւանի, կը փութամ յայտնել թէ Ընծայացուաց դասարանի մը բացման առաջարկն որ կրօն ժողովոյ կողմէ վերջնութեք նստի մէջ Ազգ. ժողովոյս ներկայացուած և անտի Նսխաստենութեան և Համարակալութեան Խառն Դիւանաց յղուած էր միամտաց պայմանաժամու, թէպէտ և յանձնուած է մեզ, սակայն Նսխաստենութեան Դիւանի միւս երկու անդամոց մին հրաժարած և մին բացակայ գտնուելուն, ըստ օրինի չեմ կարող առանձինն բերել ժողովոյ իմ քննութեանս արդիւնքն : Ուստի կը խնդրեմ Պատկ. ժողովէք որ հրաժարեալ անգամին տեղ, որ է Արշակունի էֆէնտի, նոր անդամակից մը արւել մեզ :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Ձերազ էֆէնտիի ղիտողութիւնն շատ օրինաւոր է, և հարկ է պակասելոյն տեղ նոր ընտրութիւն կատարել :

ԱՆՎԱՃԵԱՆ Կ. ԷՅ. — Կատաղարիւմ Մագպուլեան էֆէնտին ընտրել :

Երեսօրիսանք ձայնակցելով Սըվաճեան էֆէնտիի առաջարկութեան, Ատենապետ էֆէնտի բուէի կը դնէ զայն և ըստ այնմ՝ Նսխաստենութեան Դիւանի անդամ ԿԱՏՈՒԱՆԷ զՀամարաժուժ էֆէնտի Մագպուլեան :

3.

Յայտարարութիւն 'ի Դիւանէ յաղագս Կարողիկոսական երից ընտրելեաց Հայոց Քուրթիոյ .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Օրակարգի անցնելէ յառաջ, ըստ օրինի կը փութամ 'ի պալատնէ

ժողովոյց հաղորդել մեր վերջի նստին մէջ կա-  
տարուած կաթողիկոսական ընտրութեան ար-  
դունքն :

Ահաւասիկ անուանքն Թուրքիոյ Հայոց Ե-  
րկոց ընտրելեաց :

Ա. Ամեն. Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոս  
Խրիմեան , բուէ 50 .

Բ. Գեոր. Տ. Մելրիսեղեկ Եպիսկոպոս  
Մուրատեան , բուէ 42 .

Գ. Գեոր. Տ. Խորէն Եպիսկոպոս Աշքեան,  
բուէ 18 .

Սոյն յայտարարութենէն յետոյ , կը մնայ  
մեզ լուծել պատգամաւորութեան խնդիրն ,  
որ մեր այս աւուր Օրակարգի Բ. խնդիրն է :

ԶԱՅՆԵՐ — Շատ լաւ , անցնիմք Օրա-  
կարգին :

Բ.

Խնդիր Պատգամաւորութեան վասն  
Կաթողիկոսական ընտրութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը հրաւիրեմ զԵրես-  
իոխան Տեարս խնդրոյն վրայ խօսք առնուլ :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ժողովս անցեալ  
անգամ որոշեց ըստ 1884ի եղանակի մասնակ-  
ցիլ և այս անգամ ամենայն Հայոց Կաթողի-  
կոսի ընտրութեան :

1884ի ընտրական եղանակի օրէնքն որ-  
դէն կը տրամադրէ՝ Երեսփոխանական Ժողովոյ  
յուրէպրկած եռանուն ցանկն ՚ի ձեռն առան-  
ձին պատուիրակի յղել ի Ս. Էջմիածին, և թէ  
հետևապէս , այս պատուիրակութիւնը կարե-  
ւոր է զրկել, վասն զի նախ՝ Էջմիածնայ մէջ  
Թուրքիոյ Հայոց կողմէ կենդանի ձայն մը  
կրնայ բարոյական ազդեցութիւն ՚ի գործ դը-  
նել Համաղգային Ընտրողական Ժողովոյն վրայ,

և Երեսփոխանական Ժողովոյ եռանուն ցանկը  
նոյնութեամբ ընդունել տալ առաջին ընտրու-  
թեան մէջ . Երկրորդ՝ մեր պատուիրակութիւ-  
նը կրնայ համղել Համաղգային Ընտրողական  
Ժողովոյ անդամներն , որպէս զի իրենց կող-  
մէ նշանակելի չորրորդ ընտրելին Ա. Կանտի-  
տայ հռչակելէ զըուշանան , որով Թուրքիոյ  
Հայոց ձայնը խեղճուած չ'իմիր : Ստոյգ է որ  
մեր պատուիրակներն երկու քուէի ձայնով պի-  
տի ընդունուին յ'Էջմիածին , եթէ Սինօզն  
Պաշտօնէնեան տառ առ տառ գործադրէ , և  
յայնժամ րնակնարար մեր պատուիրակները  
որք Թուրքիոյ Հայոց Երես. Ժողովոյ ներկա-  
յացուցիչներն են , չ'պիտի մասնակցին ընտ-  
րութեան երկու քուէի զօրութեամբ , սակայն  
նախ քան զընտրութիւն՝ պիտի խորհրդակցին  
Համաղգային Ընտրողական Ժողովոյ անդամոց  
հետ , և համաձայնութեան մը գալու պիտի  
աշխատին գոնէ առաջին ընտրելոյն մասին ,  
Եւ որովհետև Կաթողիկոսական ընտրութեան  
յարմար եղանակ մը չ'կրնինք զծէլ ց'արդ ,  
այնպէս որ Թուրքահայոց և թէ Ռուսահայոց  
իրաւունքներն պաշտպանուէին , ուստի սրտ-  
գամաւորութիւն մը զրկելը բարեղէս առիթ  
մ'է Համաղգային ընտրողական Ժողովոյ բոլոր  
անդամոց հետ խորհրդակցութեամբ՝ մի որոշ  
ընտրական եղանակի վրայ համաձայնելով նոր  
ընտիր Կաթողիկոսին միջոցաւ զծուելիք եղա-  
նակին ոյժմէն զիրութիւն մ'ընծայելու : Պա-  
լով երրորդ կէտին , քանի որ Պաշտօնէնեան  
տառ առ տառ գործադրելու երկիւղ կայ ,  
Աղգային Ժողովոյ կողմէ պատգամաւորութեան  
մը ներկայութիւնն ի Սուրբ Էջմիածին՝ կենդա-  
նի բողոք մը կրնայ համարուիլ ընդդէմ Պաշա-  
տէնիոյ գործադրութեան , բաւական է ոչ  
պատուիրակը զօրաւոր և աղղեցիկ անձինք  
լինին :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Անցեալ տա-  
րի թէպէտ ի սկզբան որոշուեցաւ Կ. Պօլսէն  
յատուկ պատուիրակ զրկել , սակայն հոգեւորս

Պատրիարքն՝ որ Կաթողիկոսական Յանձնաժողովը Կաթողիկոսական էր, պատշաճ համարեց Ամեն Մակար Սրբազանի յանձնել այդ պաշտօնը: Ամենգնիդ ալ կը յիշէք թէ Մակար Սրբազան որքան պատուարեր կերպիւն ներկայացոյց թուրքիոյ Հայոց բուհներն, մինչև իսկ հրաժարելով ընտրելեաց մէջէն: Արդ, ես կը կարծեմ թէ լաւ շարժած չենք լինիր եթէ այս անգամ փոխանակ նոյն պաշտօնն Կորին Սրբազնութեան յանձնելու, տարբեր տնօրնութիւն մ'ընենք: Կերսէս Պատրիարք շատ լաւ ըրաւ որ Կաթողիկոսական Տեղակալը թուրքիոյ Հայոց պատուիրակ կարգէց: Ուստի և կառավարիկեմ նոյն ընթացքին հետեւիլ և այս տարի:

**ՁԵՐԱԶ Մ. ԷՖ.** — Քրիստոստուր էֆէնտի խոհեմ յայտարարութիւններն կը զնահաւտի, այլ սակայն Մէլիքեան էֆէնտի առաջարկութիւնն աւելի համաձայն կը գտնեմ իմ համոզմանցս:

Պօլէն պատուիրակ չ'ըրկելու մասին եղած առաջարկը կը փոփոխէ 1883ի ընտրական օրէնքն, որ կը տրամադրէ « ընտրելեաց եռանուն ցանկն հաղորդել առ Տեղապահն Արարատեան Մայր-Աթոռոյ ի ձեռն առանձին Պատուիրակի »: Վերջին նստին մէջ առաջարկեցի Տաճկահայոց 130 քուէի իրաւունքին հետ համեմատել երեք ընտրելեաց ստացած քուէից գումարն, որ անցեալ տարի կենէր 13½ ի եւ այս տարի կիջնէ 110 ի քանի որ այս արդար բարեփոխումս մերժուեցաւ, կառավարիկեմ մերժել պատուիրակի մասին ներկայացոյցած փնտասկար բարեփոխումն: Մակար Սրբազանը Պատուիրակ կարգել, կը նշանակէ ցանկն հաղորդել « ի ձեռն Տեղապահի առ Տեղապահն » որ հակառակ է օրինաց: Անցեալ տարի Մակար Սրբազան կարգուեցաւ, այլ զմեզ անտեղեակ թողուց ընտրութեան պարագայից եւ թոյլ տուաւ որ նուազ քուէ ստացած Մուրատեան Սրբազանը նախադասութիւնս Սրբազանէն:

Օգտակար է յղել պատուիրակութիւն մը, որ կրնայ ընտրութեանն առաջ Ռուսահայ պատգամաւորաց հետ տեսակցելով, տեղեկութիւն տալ անոնց մեր երեք ընտրելեաց արժանեացը մասին, որ մեզ չարի ծանօթ չէ անոնց: 1884 ի օրէնքը բացատրել եւ պաշտպանել, եւ յիշեցնել նոցա թէ ի՞նչ տաղնայ կրնայ ծագիլ եթէ ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուի Տաճկահայոց մեծամասնութեան ցանկէն գուրս եկեղեցական մը: Պատուիրակ չ'ըրկելն տեսակ մը ձեռնպահութիւն է, որ կրնայ ջրլատել մեր Ռուսահայ եղբայրներն եւ զանազատանաց տեղի տալ մեր գաւառացոց թէ՛ ամեն միջոց չ'փորձեցինք ի պաշտպանութիւն իրենց իրաւանց, մասնաւանդ որ այս տարուան ցանկի 110 քուէովն՝ Տաճկաստանի 65 գաւառներն 55 ի իջած եղան:

Մասնաւազլիւն ետ դարձուելու պատահականութիւնն ալ անպատուութիւն չէ մեր պատուիրակութեան դի մենէ շատ աւելի մեծ ազգայ պատահած է այս: Ինչ որ անպատուութիւն է մեզ, ծախքը խնդր ընելն է:

Պատուիրակութեան մէկ առաւելութիւն ալ սա կրնայ լինիլ որ նոքա Ռուսահայոց ծրխական վարժարանաց փակման խնդրոյն մասին կարող են ի պաշտօնէ տեղեկութիւն ըստանալ Ս. Սինդէն, վասն զի թէ և փակման լուրն հասած է մեզ, սակայն մանրամասնութիւնք կը պակսին, թէ ի՞նչ պարագայներու մէջ Ռուսիոյ Կառավարութիւնն հարկ տեսած է այս խիտ տնօրնութիւնն ի գործ դնել:

Ուրեմն վերջացնելով յատուկ պատուիրակութեան մը պէտքին վրայ կը պնդեմ, զի այս տեսակ պարագայից մէջ հարկ է մեզ զէմ բարոյական արիւթիւնն մը ցոյց տալ:

**ՍՐՎԱՏԵԱՆ Կ. ԷՖ.** — Ձերազ էֆէնտի իւր խօսից մէջ այն տեսակ քաղաքական կէտեր շօշափեց, որք կրնան փնտասկար հետեւութիւն ունենալ: Խնդիրն փափուկ է եւ հարկ է շրջանայեաց լինել:



ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձերազ էֆէնտի իւր ատենարանութեան մէջ ընաւ քաղաքական ո եւ է ակնարկութիւն շ'ըրաւ, եթէ այդպէս լինէր, Գլւանս պիտի փութար, ըստ մեր ներքին օրինաց, իւր սպարականութիւնն կատարել:

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — Ես ալ կը դնահատեմ Ձերազ էֆէնտի նրբահայեաց դիտողութիւնները, բայց համակարծիք չեմ մեծ մասին, ըստ որում այս տեսակ ուղղութիւն մը փոփոքելի արդիւնքն չ'պիտի կրնայ յառաջ բերել:

Արդ, պատուիրակութեան խնդրոյն անցնելէ առաջ, հարկ է նկատողութեան առնուլ մի կարեւոր կէտ:

Կը յիշէք Տեարք, թէ անցեալ տարի կատարողական ընտրութեան ժամանակ, Ազգային ժողովոյ ջուէից արդիւնքն հաղորդուեցաւ Ս. Պատրիարքին, յանձնարարուելով որ « ի ձեռն առանձին պատուիրակի » յղէ զայն ի Ս. Էջմիածին: Հրատարակուեցաւ ի լրագիրս թէ որոշուած են արդէն պատուիրակը որը էին Գեր. Խորէն Նար-պէյ Սրբազան եւ ոչ-երեսփոխան՝ Նորատունկեան Յարութիւն էֆէնտի: Այլ վերջին պահուն լուր ելաւ թէ ի բաց թողուած է պատուիրակաց աւաքունն, իբրև թէ համաձայնութիւն չ'ըր գոյացած պատուիրակութեան տրուելիք հրահանգի մասին: Այլ այս ամէնը զրոյցներ էին լոկ, եւ մննք չ'լուսաբանուեցանք ց'արդ այս յանկարծական որոշման պատճառներուն վրայ:

Ուստի հարկ է նայ տեղեկանալ թէ կատարողական Յանձնաժողովը հակառակ Ազգ. ժողովոյ որոշման ինչ պատճառաւ յատուկ պատուիրակ զրկել չ'ըր ուղած, եւ բաւական համարած էր Ամեն. Մայր Սրբազանն Թուրքիոյ Հայոց պատուիրակ կարգել: Այս մասին կատարողական Յանձնաժողովն անդեկութիւն չ'ստացած, վերստին պատուիրակ զրկելու որոշում տալն անպատեհ կը համարիմ, վասն

զի ինչ պատճառաւ որ անցեալ տարի հարկ դատուած էր յատուկ պատուիրակ չ'առաքել, դուրսէն նոյն պատճառաւ դարձեալ հարկ չ'համարուի զրկել:

Գալով բուն խնդրոյն, պէտք է գիտնալ թէ մեր Տէր ընանձեւն չ'ներքեր բնաւ որ Թուրքիոյ Հայքս անուանական մասնակցութիւն մ'ունենամք կատարողական ընտրութեան մէջ: Հարկ է որ Ազգային ժողովոյ կարգեալ պատգամաւորը որոշ եւ կտրուկ հրահանգներ ստանան, եւ մասնաւոր ընտրուին այնպիսի անձինք, որք համապատասխան են կողմէ իրենց տրուելիք դերին, համաձայնին մեր հրահանգաց եւ գործադրեն զայնս կէտ առ կէտ: Այլ ըստ որում Նրեսփոխանական ժողովոյ մէջ չէ կարելի զբաղիլ այդ հրահանգաց պատրաստութեամբ, կառավարիմ խնդիրն յանձնել Ատենապետաց Գլւանին՝ որ Ազգ. Վարչութեան եւ կատարողական նախորդ Յանձնաժողովոյն կարծիքն եւս առնելով, խմբագրէ այդ հրահանգի դիրք, յորում զըծուած լինին պատուիրակաց պաշտօնն ու սահմանը եւ եթէ հարկ լինի, որոշէ պատուիրակութիւնն, եւ զայնս Ազգ. ժողովոյ վաւերացմանն ներկայել: Ղկնի վարժանն ի գործ դնէ:

ՄԵՐԵՒՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Կը ներէ՞ք ինձ որ չորս բառով բարեփոխում մ'առաջարկեմ, ամիփեղով ներկայացեալ առաջարկներն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Առ Արիիարեան էֆ.) Ըստ օրինի՞ խօսքն Ձերն է. կուզէ՞ք Մէրեւմ-Գուլու էֆէնտի տալ զայն:

ԱՐՔԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ. — Այո, կուտամ:

ՄԵՐԵՒՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Երկուստէր յայտնուած կարծիքներն ալ դնահատելի համաձայնաբար տողորեալ լինելուն տարակոյ չ'կայ

քնաւ . իմ մասին , համակործիր դռնուելով Գուրգէն էֆ. ի առաջարկութեան զլիաւոր կէտին , եթէ կը նեղէք , կուզամ բարեկուխում մ'առաջարկել երկու բառով : Գուրգէն էֆէնտի ըսել կուզէր թէ պատուիրակ զրկելու կամ չզրկելու իրաւունքն Ատենայեանաց-Ղիւանին վերապահենք : Այս կրնար ընդունուիլ , եթէ անցեալ տարի մեր քուէկրիած օրէնքին մէջ բացորոշապէս յիշատակաց չ'ընէինք « ի ձեռն առանձին պատուիրակի » բառերն : Հետեւաբար պատուիրակի զրկելու ըսկըդունքն ընդունած ենք 1884 ի բանաձեւով . կը մնայ ուրեմն պատուիրակութեան բընուածիւնն , ընտրելի անձինքն եւ տրուելիք հրահանգներն որոշել , եւ այս երեք կէտերն այնքան առնչութիւն ունին միմեանց հետ եւ լուրջ եւ շրջանայեաց խորհրդակցութեան կարօտ են , որ առանց կանխաւ համաձայնելու չենք կրնար որոշում մը տալ , եւ այս խորհրդակցութիւն չկրնար կատարուիլ աստ , յատենի ժողովոյն . սխալ ըմբացքի մը հետեւած կը լինիմք , եթէ այսպէս վարուինք : Ամենէն բանաւոր եւ գործնական ձաճքան է , ինչպէս առաջարկեց Գուրգէն էֆէնտի , Ատենայեանաց-Ղիւանին յանձնել խնդիրն ստերեք բաժանումներով « պատուիրակութեան բնութիւնն , ընտրելի պատուիրակներն եւ անոնց տրուելիք հրահանգն » որոշել :

**ՊԱՐՈՆԻԿԵԱՆ Մ. ԷՖ.** — Կը տեսնեմ որ խնդրոյն վրայ քանի մը տարբեր առաջարկներ ներկայացան : Քրիստոստուր էֆէնտի կըսէ թէ յատուկ պատուիրակներ զրկելն անելորդ է . Զերազ էֆէնտի պատուիրակաց առաքման կարեւորութեան վրայ կը պնդէ , իսկ Գուրգէն էֆէնտի կառավարիչ նախ այդ պատուիրակաց տրուելիք հրահանգն պատրաստել ի ձեռն Ատենայեանաց Ղիւանի :

Հարկ է գիտնալ թէ ամեն իրաւունք օրէնքով մը կը պաշտպանուի , եւ մեր միակ օրէնքն Սահմանադրութիւնն լինելով պէտք է

որ դործեմք նմա յենլով եւ պաշտպանեմք մեր առանձնաշնորհումներն Սահմանադրութեան զօրութեամբ : Հետեւաբար , ըստ այսմ , հարկ է առանց ժամանակ կորսնցնելու երկու պատուիրակաց ընտրութիւնն կատարել եւ առաքել ի Ս. Էջմիածին . չեմ կրնար ըսել թէ նոքա անպատճառ լաւ ընդունելութիւն մը կը գտնեն անդ , բայց ասի պատճառ մը չէ որ թերահամար մեր պարտականութիւնն կատարել :

Ուստի կառավարիւմ , նախ երկու պատուիրակաց ընտրութիւնն կատարել աստ յատենի ժողովոյն , որք երթալով ի Ս. Էջմիածին թուրքիոյ Հայոց մասնակցութեան իրաւունքն ի գործ դնեն եւ Սահմանադրութիւնն կէտ առ կէտ պաշտպանեն ընդդէմ Պալատէնիոյ . եւ ասպա՛ ըստ առաջարկի Գուրգէն էֆէնտի՛ այդ պատուիրակաց տրուելիք հրահանգն գծել :

**ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Զերազ էֆէնտի խօսքին մէկ քանի կէտերուն թէեւ կուզէի պատասխանել , բայց քանի որ կառավարիչ խնդիրն յղել Ատենայեանաց Ղիւանին , ուստի կը վերապահեմ ըսելիքներս յայտնել Ատենայեանաց Ղիւանին մէջ :

**ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ.** — Մեր սխալն եղած է շատ անգամ բաղադրակցութեան վերանադաւառներն սուսանել եւ մինչեւ իսկ քաղաքական հանգամանք տալ մեր զուտ կրօնական խնդրոց , եւ ոչնայս է պատճառն որով շատ անգամ չենք կրնար առ մեզ ներկայացեալ ամենապարզ խնդրոց մէջէն ելնել , ինչպէս որ մեր պաշտօնակցաց մին քիչ մ'առաջ հաստատեց իմ այս ըսածն . . .

**ԹԱՐԵԱՆ Ա. ԷՖ.** — (Ընդմիջմամբ) Դո՛ւք ալ , Պերպլեան էֆէնտի , շատ անգամ խընդրին չեղլով՝ սաւառնած էք բանաստեղծական վերնադաւառաց մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Առ. Թնկրեան ԷՖ.)  
Թողէք տոննարանին շարունակել : Եւ դուք  
Պէտքէրեան էՖէնտի հաճեցէք բուն խնդրոյն  
դառնալ :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Շարունակելով)  
Արդ , դառնով խնդրոյն , կրեմ թէ՛ եթէ  
Վեհ : Ձարն բեկանեց անցեալ տարույ կաթո-  
ղիկոսական ընտրութիւնն , ո՛չ թէ այն տե-  
սակ թերութեանց համար էլին որք գործուցան  
ի Թուրքիա , այլ այն տեսակ թերութեանց  
համար որք տեղի ունեցան ի Ռուսիա : Այս նշ-  
կատմենքով , Աղջ. Ժողովս վերահաստատեց  
իւր 1884 ի որոշումը , եւ որովհետեւ առաջին  
ընտրելին հանդեալ է ի Տէր , երկրորդն հըռ-  
չակեց առաջին եւ այսպէս յաջորդարար :  
Ուրեմն նոր գործողութիւն մը չեմք կատարե-  
ր այժմ եւ պէտք է ամէն կէտի մէջ համաձայ-  
նութիւն Յճ ի եղանակին : Արդ , քանի որ անցեալ  
տարի Ներսէս Պատրիարք՝ ոյր իմաստութեան  
վրայ կատարեալ վստահութիւն ունէինք ,  
պատշաճ դատեց յատուկ պատուիրակ չ'ըրկել  
կ , Պօլսէն եւ Մակար Սրբազանի յանձնեց այդ  
փախուկ պաշտօնն , ի՞նչ պատճառ կայ այժմ  
այդ ընթացքէն շեղու . միթէ պարտաւոր  
չ'ենք օրինակ առնուլ այն մեծ մարդէն որ զմեզ  
վարեց այնքան ժամանակ , եւ անոր ընթացքին  
հետեւիլ նմանօրինակ պարագայից մէջ . հա-  
կառակորդք միթին եւ խորհրդաւոր շահեր ցոյց  
տալ կուզեն , որպէս զի կարենան յաջողցնել  
մասնաւոր պատուիրակաց առաքումն . եւ ի՞նչ  
կրտսն — կառարկեն թէ՛ պատգամաւորք կարող  
են ի Ռուսաստան Հայ-Վարժարանաց փակման  
մասին ի մտանց աւելի տեղեկութիւններ քա-  
ղել եւայլն : Վարժարանաց փակման մասին՝  
դաջող պատգամաւորք ի՞նչ կարող են ընել ,  
նոյն իսկ եթէ ամբողջ Նրեպիտխանութիւնն  
ալ երթայ , ի՞նչ օգուտ ունի : Նոյնպէս չեմ  
կարծեր որ մեր պատգամաւորք առիթ ունե-  
նան , որպէս ըսուեցաւ , կաթողիկոսական  
ընտրութեան միակերպ եղանակի մը որոշման  
մասին խորհրդակցիլ Համազգային Ժողովոյ

հետ եւ համաձայնութիւն դոյցանել : Այս  
տեսակ բանակցութիւն մը միմիայն ապագայ  
կաթողիկոսէն կրնամք սպասել :

Ինձ այնպէս կը թուի թէ՛ մեր մէջ կան  
երեւոյթխաններ ալորբրինեց առաջարկութիւնն  
գործադրել տալ ուղերով հոգեւոյս Պատրի-  
արքի բացակայութենէն զո՞հ լինելնին կը հաս-  
տատեն , վասն զի եթէ Նորին Սրբազնութիւ-  
նըն այսօր կենդանի լինէր , ընաւ տարակոյս  
չ'կար որ միեւնոյն ընթացքն պիտի բռնէր  
ներկայ ընտրութեան մէջ եւս եւ մաղի շար-  
ջ'պիտի շեղէր . . . :

ՋԵՐԱՋ Մ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Կը  
բողոքեմ Պէրպէրեան էՖէնտի այդ խօսքին  
դէմ : Մեր մէջ չ'կայ մէկն որ զո՞հ մնացած  
լինի Ներսէս Սրբազանի մահուանէն :

ՊՈՒԿՈՒՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Ես ալ կը բո-  
ղոքեմ այդ խօսքին դէմ :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Առ. Ընդմիջողոս)  
Դուք միմիայն Ձեր մասին կրնաք բողոքել :  
Ուսկի՞ց զիտէր թէ հոգեւոյս Սրբազանի մահ-  
ուանէն զո՞հ մնացողներ չ'կան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երկրորդ անգամ կը  
հրաւիրեմ Ատեհարան էՖէնտին , որ առանց  
խնդրէն շեղու եւ ընդմիջմաց պատասխանե-  
լու , խնդրոյն վրայ շարունակէ խօսիլ եւ հնար  
եղանակ զոյր զգուշանայ սոյն օրինակ բողո-  
քանաց տեղի տալ :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Շարունակելով)  
Հոգեւոյս Վարժապետեան խոհեմութեամբ  
վարուեցաւ կըսի , զի զիտէր թէ մեր մաս-  
նակցութիւնն իրական չէ , այլ լոկ անուանական ,  
եւ եթէ Աղջային Ժողովոյ կողմէ երկու պատ-  
ուիրակներ երթային , թոյլ չ'պիտի տրուէր  
նոցա իջման Տաճարը մտնել եւ մասնակցիլ  
բուէարկութեան , իբր Թուրքիոյ Հայոց բժըր

թե՛սք որ ներկայացուցիչք, և այս կերպով պարտութիւն մը կրած պիտի լինէինք :

Եղբայրացեալք տրեմն, կը ձայնակցիմ Ղազարսեան էֆէնտիի և կրեմ թէ քանի որ անցեալ տարուան եղանակն ընդունեցանք, ի բոց թողունք նաև անոր վերջին մասը յետ փոխելու գաղտփարն, և մեր բուէներն յանձնեմք այս անգամ ևս Մակար Սրբազանին, որ անցեալ տարի այնքան վեհանձնութեամբ և անձնուիրութեամբ պաշտպանեց թորբոց Հայոց կաթողիկոսական ընտրութեան մէջ ունեցած իրաւունքներն :

**ԶԵՐԱԶ Մ. ԷՅ.** — Ի պատասխանի Պէրպլեբեան էֆէնտիի ակնարկութեանց՝ սա չափն միայն կը յիշեցնեմ թէ՛ ինքն անցեալ տարի 84ի եղանակն ինձ գէ՛մ կը պաշտպանէր և զորամանկ է որ այս անգամ կ'եննէ այդ եղանակին գէ՛մ խօսիլ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Ինչոյ ըլլալ որ Պէրպլեբեան էֆէնտի մէկ տարուան միջոցի մէջ իւր կարծիքն փոխած ըլլայ, հետևաբար այդ կէտն խնդիր չ'կրնար ըլլալ :

**ԶԵՐԱԶ Մ. ԷՅ.** — 1884ի եղանակը կը տըրամադրէ պատուիրակաց ընտրութիւնն ի ձեռքն Ազգային ժողովոյ կատարել, հետևաբար զայդ խնդիր Ատենապետաց Գրեանին չէ կարելի յընէ : Եւ ինչպէս որ Պատուիրաբանն հըրբախակաց խնդրոյն մէջ որոշուեցաւ որ Մայր-Գիւտնն Վարչութեան հետ խորհրդակցութեամբ նշանակէ ընտրելիներն, նոյնպէս կառաջարկեմ որ պատուիրակաց առարման և անոնց տրուելիք հրահանգաց խնդիրն ևս յանձնուի Մայր-Գիւտնի և Վարչութեան . . . :

**ԱԶՅՆԵՐ** — Այդ երկու պարագայներն և պաշտօններն իրարմէ տարբեր են :

**ԶԵՐԱԶ Մ. ԷՅ.** — ( Շարունակելով ) Իսկ

և թէ ժողովն զոյս խնդիր Ատենապետաց Գրեանի անօրինութեան յանձնէ, որպէս կառաջարկէին Մէրեմէմ—Գուլի և Գուրդէն էֆէնտիք, այժմէն կը յայտարարեմ թէ՛ ևս իւր Ատենապետաց Գրեանի անգամ՝ ընաւ չ'պիտի մասնակցիմ իւր այդ աշխատութեանց :

**ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՅ.** — Խնդիրն ըստ բուականին պարզուեցաւ, Ատենապետ էֆէնտի, ուստի կառաջարկեմ այլ ևս բուէարկութեան ձեւնարկել :

**ԱՆԱԶԱՆ ՆՍԱՐԱՆՆԵՐԷ** — Այո՞, բո՛ւէ, բո՛ւէ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Վիճաբանութիւնն փակելէ յառաջ, խօսք կուղէ կաթողիկոսական նախորդ Յանձնաժողովոյ անգամ Տ. Խորէն Նոր-Պէյ Սրբազան մի քանի կարևոր բուցարութեանց համար : Արդեօք ժողովը կուղէ՞ լսել :

**ԱԶՅՆԵՐ.** — Լսէ՛ք, լսէ՛ք :

**Տ. ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊԻՍԿՆԱՐ-ՊԵՏ.** — (Բեմըն էլիցելով) Տեսքը, 1884ի կաթողիկոսական ընտրութեան եղանակին ամբերիդ ալ քաջահըմուտ էր, այլ որովհետև կը տեսնեմ թէ պատուիրակութեան խնդրոյն մասին տարակցյսներ կան և՛ յարգոյ պաշտօնակիցքս կատարեալ հըմտութիւն չունին այս մասին, հարկ կըգամ ըընականաբար, իւր մին կաթ. Յանձնաժողովոյ անգամոյ, բացատրութիւն տալ թէ ինչ պարագայից մէջ յետաձգուեցաւ անցեալ տարի, պատուիրակաց անտրամն :

Այլ նախ քան զայս, պէտք է յայտարարեմ թէ՛ ևս համարիտ չեմ ո՛յն կառաջարկին զոր Ազգային Վարչութիւնը ներկայեց ժողովոյդ վերջին նախն, և՛ զոր ստորագրած ալ չեմ կը փափայրէի անցեալ նստին զայլ և կարծիքս յայտնել այս խնդրոյն մէջ, այլ տկարութիւնն որ կը պահէր զիս ի մահճի, թոյլ չ'տուաւ :

Գրածալով ուրեմն բուն խնդրոյն, կը յիշէք, Տեաքք թէ Աղգային ժողովս իւր բուէ-արիութիւնը կատարելէ յետոյ, հրգեցաւ Պատրիարքին և Կաթ. Յանձնաժողովոյ յանձնեց ի Ս. Էջմիածին հաղորդել անոր արդիւնքը : Յանձնաժողովը երկու պատուիրակ ընտրեց որոց մին լինելու պատիւն ունէի եւս • պատրաստուեցան մեզ տրուելիք հրահանգներն և մեր մեկնելէն յառաջ, Յանձնաժողովն վերջին նիստ մ'ունեցաւ ուր կարգադրուեցան հրահանգներն և յետ այլ և այլ խորհրդակցութեանց, ընդունուեցան : Սակայն աշխարհական պատուիրակն, որ բիշ մ'ուշ եկած էր, ղիտորութիւններ ընելով, հարկ եղաւ վերտօմն վիճարանել անոր վրայ • հուսկ ուրեմն Նորատունկեան էֆէնտի չհամակերպելով այս հրահանգին, հրաժարեցաւ, ապա խնդիր ծագելով պատուիրակ զրկուելու կամ չզրկուելու մտպին, ուրիշ ժողովականաց բուէներն բաժնուցան հաւասարապէս • չորս ձայնի դէմ չորս ձայն կար, ևս ալ տեսնելով որ պատուարել չ'պիտի լինէր այս կերպով պաշտօն մ'ընդունել, հրաժարեցայ : Եւ որովհետև ժամանակ չ'կար խնդիրը Պատե. ժողովոյը բերելու, ըստ որում փակուած էր այն, հեռագրուեցաւ ու զրուեցաւ առ Ալեկ. Մակար Սրբազան որ ըստանձնէ պատուիրակի պաշտօնն :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Հոգեւոյ Պատրիարքն յատուկ Պատուիրակ զրկուելու կողմն էր թէ ոչ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՏ. — Աէր պիւրեան էֆէնտի այն աստիճան խնդրոյն երկուակայական կողմն բունեց, որ կարծել տուաւ թէ Ներսէս Պատրիարք' առ ի խոհեմութիւն չէր ուզած պատուիրակ զրկել. այլ սակայն պէտք է գիտնալ թէ մեր հոգեւոյ Նախագահն պատուիրակութիւն զրկելու կարծիքէն էր և նա ինքն առաջարկեց ինձ այդ պաշտօնը : — Կը յուսամ թէ Գուրգէն էֆէնտի ևս լուսա-

բանդուեցաւ տղաժ այս բացատրութիւններէս և կրցաւ ըմբռնել թէ ինչ պատճառներով յետաժողուեցաւ պատգամաւորութիւնն :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — (Պատասխանելով) Ինձ և չ'լուսարանուեցայ, վասն զի չըսիք թէ' աշխարհական պատգամաւորին կողմանէ եղած առարկութիւնը ո՛յք էին :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՏ. — Տըւած բացատրութիւններս անբաւական կը համարիք • ուրեմն հարկ է յիշատակել թէ պատուիրակութեան ետ մնալուն էն մեծ պատճառն ո՛րն եղաւ : — Որովհետև աշխարհական պատգամաւորն հրաժարեցաւ և նա էր որ պիտի հոգար ուղեւորութեան ծախսը, ընականաբար եկեղեցական պատուիրակն ալ հարկադրեցաւ ետ մնալ . . . :

ԶԱՅՆԵՐ. — Արդարեւ յաւալի բան :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՏ. — Ցաւ կը յայտնէք Տեաքք, ճշմարտութիւնն լսելնուղ համար, այլ սակայն ճշմարտութիւնը որքան ալ ցաւալի լինի, պէտք է Լախի ըլլայ :

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Բ. ԷՖ. — (Առ Տ. Խորին Սրբազան) Ձեր այդ յայտարարութեան մէջ սխալ կայ • ուղղեցի՛ք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ղազարոսեան էֆէնտի, բիշ մը համբերեցէք և ես պիտի տամ առ այս՝ հարկ եղած բացատրութիւնը : (Առ Ատենաբաճ Սրբազան) Շարունակեցէք Սրբական Հայր :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՏ. — (Շարունակելով) Աղգային ժողովս թէ՛ 1866ին և թէ՛ 1884ին պատուիրակութիւն զրկել որոշած է • առաջին անգամ զրկուեցան պատգամա-

ւորք, իսկ երկրորդին համար՝ պատճառներն չըսեցիր :

Ըտոյներ եղան թէ մեր պատուիրակը կրնան մերժուիլ սահմանադրին վրայ : Կը զրտասխանեմ թէ բոլորովին անհիմն է այս փաստ, ինչպէս որ փորձով ալ զխտեմ : Որովհետեւ եկեղեցականք տարբեր պայմաններով կը մտնեն Ռուսական հողն, անցեալ տարի երբ ուղեւորութեան պարտաստութեանց ատթիւ, անցազրի համար հրաման խնդրած էի, և այն պահուն իսկ՝ երբ Դեսպանատունէն կը զեկուցուէր ինձ թէ հրաման եկած է որ երթում, ճիշդ այդ պահուն պատուիրակութեան խընդիրն ալ ֆուրն ինկու . . :

( Շշուկ եւ աղմուկը )

ԱՍՏԵԱՊԵՏ ԷՖ. — ( Ընդվիշելով ) Ինչպէս քիչ մ'առաջ յայտնեցի, հարկ կը համարեմ Ատենաբան Սրբազանին ըրած սոյն յայտարարութեան թիւրիմացութիւնն ուղղել :

Խորէն Սրբազանի խնդրոյն վրայ տուած բացատրութեանց մէջ ըրած այն յայտարարութիւնն թէ՛ ըստ որում աշխարհական պատգամաւորն պիտի վճարէր ուղղւորութեան ծախսն և, որ չուղեց երթալ և ահա այս պտոճառու ջուրն ինկու պատգամաւորութեան երթն, սխալ է :

Ես շատ լու գիտեմ որ երբ աշխարհական պատգամաւորն տեսաւ հրահանգն, չ'ընդունեց և պահանջեց ուրիշ տարրեր հրահանգ : Եթէ կամ. Յանձնաժողովն իր մէջ համոճայն լինէր և յատուկ պատգամաւորութեան մը արհիւն զգար, անշուշտ կրնոր նոյնին տեղ ուրիշ մը յղել : Միթէ՞ աղբին մէջ կը պտակսին ուրիշ ազգասէր անձինք : Ըսելէ թէ պտոգամաւորաց յետաձգման պատճառն էր կործեաց բաժանուումն և ո՛չ թէ՛ դրամն :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՏ. — Ատենապետ էֆէնտի, սխալ ըմբռներ էք իմ խօսքս : Ես չ'ըսի թէ՛ աշխարհական պատգամաւորն չուղեց դրամն վճարել, այլ ըսի թէ՛

հրահանգի մասին չ'կրցաւ համաձայնիլ Յանձնաժողովն հետ : ( Շարունակելով ) Ըսուեցաւ նաև թէ մեր պատուիրակներն չ'պիտի կարենան իջման Տաճարն իջնել և քուէարկել, այլ որո՞վ կ'ուսամբ. նոյն իսկ Պալատէնիոյ տրամադրութեամբ ամեն թեմ՝ իր ներկայացուցիչն ունի, և մեր պատուիրակը կը մասնակցին քուէարկութեան, երկու ձայնիւ միայն : Այլ միթէ նո՞ր է այս և այսպէս շեղու՞մ 1866ին, երբ հոգեւոյս Պատրիարքն՝ սոյն տունն Ներսէս Վարդապետ՝ և Նորատուկեան Յակոբ էֆէնտին՝ Թուրքիոյ Հայոց քուէներն տարին : Ի՞նչ ըրին յայնժամ մեր պատուիրակներն. Իջման Տաճարը մտան և քաջութիւն ունեցան ստորագրելու թէ իրենք իրր 65 վիճակաց ներկայացուցիչ զնացած են անդ :

Ասանց աւելի ծանրանալու պատահան այս կէտորուն վրայ, կըսեմ թէ՛ ինչ որ 1866ն ըրաւ և 1884ը պահպանեց, պէտք է այժմ ևս հետեւիլը անոր : Պահ մ'առաջ Ատենաբան մը շատ ճարտարութեամբ ուղեց Ներսէս Պատրիարքի վերագրել պատուիրակ չ'ըրր. կելու պատասխանատուութիւնը և Անոր շքոյն ներքև ընդունիլ տալ մեղ այդ հանդուում, այլ շատ թիւր է այս մեկնութիւն. պէտք չէ՛ այս տեսակ պատասխանատուութիւն մը բարդել Նորս վրայ որ չէ՛ այլ ևս : Հոգեւոյս Պատրիարքն կը փափարէր որ Կ. Պոլսն պատուիրակներ երթան, ինչպէս զնացած էր և Ինքն ալ :

Ատնք են ահա, Տեարք, իմ տալիք տեղեկութիւններս : Եւ այժմ եզրակացնելով թէ պատուիրակութիւն զրկել փափարող Երեսփոխանաց համակարծիք եմ, կրասաջարկեմ որ եթէ պատուիրակաց ընտրութեան և տրուելիք հրահանգաց պատասխանութեան գործն Ատենապետաց Դիւանին պիտի յանձնենք, հարկ է որ ժողովդ որոնց թէ՛ ի՛նչ կերպով, և միանգամայն Վարչութեան հետ խորհրդակցելու պայմանաւ այս տեսակ յանձնարարութիւն մը լինի Ատենապետաց Դիւանին :

**ՄԵԼԻԻԿԵԱՆ Մ. ԷՖ.** — Կը ձայնակցիմ  
Նար-Պէյ Սրբազանի եղբակայութեան :

**ՋԱՏՆԵՐ.** — Բայց Վարչութիւնն արդէն  
իւր կարծիքը առած է . հարկ չ'կայ նորէն  
իրեն դիմելու :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** -- Ինչ որ ալ լինի տըր-  
ուելիք որչա՞մն, Ատենապետաց Դիւանն յայտ-  
նի է թէ Վարչութեան կարծիքն կառնու :

( Զանազան նստարաններէ երեսփոխանք  
վիճաբանութեան փախուսք կը պահանջեն . )

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Վիճարանութիւնք  
բաւականէն աւելի երկարեցան, զբեթէ բոլոր  
Երեսփոխանք խօսեցան և խնդրոյն ոչ մի պա-  
րագայն ի մի՞տն մնաց: Արդ, ժամ է որ ըստ բաղ-  
ձանաց բազմաց, փակեմք վիճարանութիւնն և  
ապա անցնիմք ներկայացեալ տարբեր առաջար-  
կութեանց :

**ՋԱՏՆԵՐ.** — Այ՛, փակումն վիճարանու-  
թեան :

Հետևաբար քուէարկութիւն կատարուե-  
լով, Ժողովն 9 քուէի դէմ 22 քուէով ԿՈՐՈՇԷ՛  
փակել վիճարանութիւնն :

( Թեք +սեւրի+ութեան )

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Այժմ հարկ կը համա-  
րիմ յայտարարել թէ՛ ժողովս բնաւ խնդրոյ  
նիւթ չ'կրնար ընել պատուիրակի կարգելու  
կէտն, ըստ սրում, 1884ի ընտրական եղանա-  
կին մէջ, որ ընդունուած է Ազգային ժողովէս,  
բացորոշուցան նշանակուած է այս պարագայն  
« Ի ձեռն առանձին պատուիրակի » բառերով :

Ուստի կը մնայ որոշել թէ՛ Ատենապետաց  
Դիւանին թէ՞ ոչ Վարչութեան պէտք է  
յանձնուի պատուիրակութեան բնութիւնն ,

անձինքն և տրուելիք հրահանգն որոշելու  
պաշտօնն :

Արդէն մէկ քանի առաջարկներ կան Գուր-  
գէն, Մէրեէմ-Գուլի, Պէրպէրեան և Թորոս-  
եան էջֆնտիկ կողմանէ, սրբ բիշ շատ զիրար  
կը շօտախեն. ուստի խնդրոյն լուծումը դիւ-  
րացնելու համար կը հրահարեմ յիշեալ Երես-  
փոխանք որ համաձայնելով իրենց մէջ, մի որոշ  
բանաձև ներկայեն Դիւանիս ի քուէարկութիւն:

( Ատենապետ էջֆնտիկ այն հրահարին վը-  
րայ յիշեալ Երեսփոխանք համաձայնելով իրենց  
մէջ հետեւեալ բանաձևն կը ներկայեն Դիւանին )

« Ազգային ժողովն իւր Ատենապետաց  
Դիւանին կը յանձնարարէ լիազօր իրաւասու-  
թեամբ՝

- Ա. Պատուիրակութեան եղանակը սահմանել .
- Բ. Ի հարկին Կ. Պորէն պատուիրակ ընտրել .
- Գ. Պատուիրակաց հրահանգն պարտատուել »

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Լուցիք ներկայացեալ  
այն բանաձև : Արդ, ով որ կընդունի զայն,  
թաղ հաճի յոտնկայա յայտնել իւր կամքն :

Հետևաբար յոտնկայա քուէարկութիւն  
կատարուելով, ժողովն 2 քուէի դէմ միաձայնու-  
թեամբ ԿԸՆԳՈՒՆՆԻ այն բանաձև և կը յանձ-  
նարարէ զայն իւր Ատենապետաց-Դիւանին ի  
զորձադրութիւն :

Այն քուէարկութեան մէջ ձեռնպահ կը  
մնան Մ. Չերաղ և Մ. Մէլիբեան էջֆնտիկ ,  
որք կառավարիչին « Վարչութեան հետ խոր-  
հըրդակցելու » կէտն ևս յաւելուլ բանաձևին  
վրայ :

Ատենը կը վերնայ ժամ 7 1/2ին, յաճորդ  
նիսան Զատկէն ետքը գումարելու որոշմամբ :

Ատենագլխի Ատենապետ  
Յ. ՊՅԵՆԱԿԵԱՆ Տ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ





# Ն Ի Ս Տ Ժ Թ.

8 ՄԱՐՏ 1885

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆՔ

ԿԵՒՐՈՆԱԳԱՆ ԵՐԵՍՓՈՒՆՔ  
ԵԿԵՆՅԱԿԱՆՔ

### Ա. Վ. իճակ

- 1 Սիմէօն Եպս. Սէֆէրեան Բ 2
- 2 Կարապետ Վ. Բազդաճուռնի
- 3 Վահան Վրդ. Տ. Մինասեանի
- 4 Կարապետ Քահ. Սէթեան Բ

### Բ. Վ. իճակ

- 5 Խորէն Արքեպ. Նար-Պէյ
- 6 Մատթէոս Եպս. Իզմիրեան Բ Պ
- 7 Յովհաննէս Քահ. Մկրեան Բ Պ
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ

### Գ. Վ. իճակ

- 9 Յակոբ Վ. Ա. Փափազեան Բ 3
- 10 Խորէն Քահ. Փէշիկճեան
- 11 Ոսկի Քահ. Օնանեան
- 12 »

### Դ. Վ. իճակ

- 13 Եղիշէ » Այվաղեան
- 14 Յովհաննէս Վ. Արշարունի
- 15 Սահակ Քահ. Տ. Սարգսեան Բ Պ
- 16 »

### Ե. Վ. իճակ

- 17 Յովսէփ Վարդ. Այվաղեան
- 18 Գարեգին » Թաթարեան
- 19 Սուբիաս Քահ. Ստեփանեան
- 20 Գարրիէլ » Խանճեան Բ

- Բ Բացակայութիւն առաջին :
- 2 » Երկրորդ :
- Պ » Ըննաւոր պատճառաւ :

ՄՈՒՍՐԵՆՆԵՐ  
Ա. Վ. իճակ

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ, ԿԵՒԻԿ-ՎԱՂԱ.  
Ե. ԳՈՒՄ-ԳԱՐՈՒՆ ԴՈՒՐՍ

- 21 Գրիգոր Պէրպէրեան
- 22 Կարապետ Աղարղմաճեան Բ
- 23 Բարթոլոմէոս Բարձրապետեան Բ
- 24 Յ. Մէրեթ-Գուլի
- 25 Տիգրան Հինքեարպէյէնտ. Բ 2
- 26 Աւետիս Սուրէնեան Բ Պ
- 27 Տօբթ. Այվաղեան Բ 2
- 28 Գէորգ Այվաղեան Բ Պ
- 29 Յակոբ Եէմէնիճեան Բ 2
- 30 Յակոբ Գուրգէն
- 31 Խաչիկ Կամարակեան Բ Պ
- 32 Միհրան Ինճեան
- 33 Մարտիրոս Էքեթեճեան Բ 2
- 34 Մանուէլ Պէշիբեան
- 35
- 36
- 37

### Բ. Վ. իճակ

- Պէշիկքաշ
- 38 Բարսեղ Շալաճեան
- 39 Յովհաննէս Քէրէտէճեան
- 40 Մեղրոն Պարոնիկեան

### ԵԿԵՒ-ԳԱՐՈՒ

- 41 Մարուգէ Յրէնկեան Բ Պ
- 42 Պօղոս Էնքեթեճեան
- 43 Յակոբ Պօշնակեան
- 44

Իսկիւտար Ս. Խաչ

- 45 Սիմէոն Ֆէլէկեան Բ 2
- 46 Գարրիէլ Նորատուկեան

47 Գասպար Գասպարեան Բ  
48

Իսկիւտար Ս. Կորապետ

- 49 Պօղոս Թորգոմեան Բ
- 50 Տրդատ Փափազեան Բ
- 51 Յակոբ Հաճեան Բ
- 52

### Գ. Վ. իճակ

Գասքմ-Բաղա

- 53 Գասպար Զերազ Բեքա
- 54 Գրիգոր Ալիսիյէճեան
- 55 Ղազար Հովոեան
- 56 Յարութիւն Պէկեան
- 57 Նշան Պօյաճեան
- 58 Վիշէն Օրմանեան Բ
- 59 Սինքերիմ Մանուկեան Բ 2
- 60 Համբարձում Մազպուլե. Բ 2
- 61 Մանուկ Ասլանեան Բ Պ
- 62

### Միջագիւղ

- 63 Տիգրան Եռտուֆեան
- 64 Մկրտիչ Գաղանճեան Բ
- 65 Մկրտիչ Ճանրմեան Բ
- 66 Ստեփան Տամատեան Բ 2
- 67

Պէլգօգ Ե. Ղալաքիա

- 68 Միքայէլ Մամիկնեան
- Գ. Վ. իճակ

Քոզկլուճնուգ Ե. Իմատիկ

- 69 Մկրտիչ Մէզպուրեան
- 70 Սիմոն Մաքսուտեան Բ 4

Գատըզիւղ

71 Գառնիկ Յովակիմեան Բ 2

72 Կարապետ Հազարեան Բ

Նարլը-Գարու

73 Միհրան Տէօբմէճեան

Եհնի-Մանալիկ Սամաթիոյ

74

Թօփ-Գափու

75

Էյուպ Ս. Եղիա Է. Ս.

Աստուածածին

76

Գուրու-Ձեշմէ

77 Կարապետ Սըվաճեան

Հիսար Է. Պոյաճի-Գիւղ

78

Նոք-Գիւղ Է. Սրեհիա

79

Պալատ

80 Մկրտիչ Կիւմրուշեան

81 Ռէթէոս Թադէոսեան Բ

82 Ներսէս Երէցեան

Քարակեօմբիւկ

83 Յովաննէս Թորոսեան

84 Կարապետ Փանոսեան Բ

Ե. Վիճակ

Սամաթիա

85 Յակոբ Արշակ

86 Յովաննէս Նուրեան

87 Ռուբէն Կիւմրուշկերտան Բ Պ

88

89

90

91

92

93

94

Խասգիւղ

95 Ռուբէն Պուլիուրեան

96 Նիկողոս ԹիւրպէնտճեանԲ

97 Նշան Փափաղեան Բ

ԳԱՒՈՒԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԻ

Ա. Վիճակ

Զմշկածագ

401

Գաղատիա

402

Ատանա

403 Մինաս Զերազ

Սղերդ

404 Մատթէոս Ալէքսանեան Բ 2

Եօզղատ

405

Մալաթիա

406 Գէորգ Վարդանեան

Իզմիր

407

Եզիպտոս

408 Աբրահամ Մուրատեան Բ

Բ. Վիճակ

Պրուսա

109Գրիստոստուր Աղաբոսեան

Եղնիկա

410 Կարապետ Կիւրճեան Բ Պ

Ամասիա

411 Համբարձում ԱլաճաճեանԲ

Բալու

412 Յովաննէս Ազնաւորեան

Եղեսիա

413 Յակոբ Իւթիւճեան

Մանճըլըխ

414

Հանըն

415

Երզնկա

416 Ռեթէոս Պէրպէրեան

Գ. Վիճակ

Կարին

417 Ահրովըէ Ազնաւորեան

Քեօթանեա

418 Ա. Ետիս Թընկերեան

Ազրիսանուպօլիս

Նիկովիդիա

420 Կարապետ Ս.Իւթիւճեան

Ակն

421 Յակոբ Գորեան Բ

Ղարանիսար

422 Կարապետ Երէցեան Բ

Արաբկիր

423 Կարապետ Խաչիկեան

Բաղէշ

424 Արփիար Արփիարեան

Գ. Վիճակ

Թեքիրտաղ

425 Տիգրան Գ. Սինանեան

Կեսարիա

426

Խարբերդ

427

Պալքեսէր

428 Ստեփան Գօլջեան

Մուշ

429 Ստեփան Փափաղեան Բ 2

Տիվրիկ

430 Նշան Գարաջաշ

Զէյրուն Է. Մարաշ

431

Տրապիզօն

432

Ե. Վիճակ

Պաղտատ

433 Կարապետ Սէթեոս

Տիգրանակերտ

434 Միհրան Զօպանեան Բ 2

Վան

435 Մարկոս Աղաբէգեանց

Աղքամար

436

Հայկպ Է. Այնթապ

437

Սեբաստիա

438 Մկրտիչ Յ. Մէլիքեան

Ռուսնուգ

439

Բաբերդ

440

## ԱՋԴԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### ԱՆԴՍՄԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Տ.	Խորէն	Արքեպս.	Նար—Պէյ	Ա. Արեւադէր
2.	»	Սիմէոն	Եպս.	Սէֆէրեան	Բ. »
3.	»	Մատթէոս	»	Խզմիրլեան	
4.	»	Գարեղին	Վրդ.	Թաթարեան	
5.	»	Վահան	»	Տ. Մինասեան	Ա. Արեւադէր
6.	»	Տաճատ	»	Ոսկանեան	Բ. »
7.	»	Յակոբ	»	Ս. Փափաղեան	
8.	»	Յովհաննէս	»	Արշարունի	
9.	»	Յովհաննէս	ԲՆՅ.	Միրեան	
10.	»	Սահակ	»	Տ. Սարգսեան	
11.	»	Սուքիաս	»	Ստեփանեան	
12.	»	Գրիգոր	»	Աճէմեան	
13.	»	Խորէն	»	Փէհլիվանեան	
14.	»	Կարապետ	»	Սէթեան	

### ԱՆԴՍՄԻ ՔԱՂԱՔՈՒԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Աղնաւորեան	Յովհաննէս	Էֆէնտի	
2.	Այվազեան	Տօք. Նշան	»	Բ. Արեւադէր
3.	Գլըճճըեան	Գէորգ	»	
4.	Թորոսեան	Յովհաննէս	»	Ա. Արեւադէր
5.	Խըրըրեան	Գրիգոր	»	
6.	Խօրասանճեան	Թովմաս	»	
7.	Հաղարեան	Կարապետ	»	
8.	Հալաճեան	Բարսեղ	»	Բ. Արեւադէր
9.	Մաքսուտեան	Սիմոն	Պէյ	Ա. »
10.	Մամիկոնեան	Միքայէլ	Էֆէնտի	
11.	Պապօեան	Պապի	»	
12.	Սթիմարանճեան	Գէորգ	»	
13.	Փէշտիմալճեան	Տօքթօր Տիգրան	»	
14.	Գիւրքճիխանլեան	Կարապետ	»	

# ՊԵՐՈՒՆԵԿՈՒԹԻՒՆ

Օ Ր Ս. Կ Ս. Ր Գ.

- Ա. — Ատենական գործողութիւնք .
1. — Վաւերացումն ժ.ն. նստի Ատենագրութեան .
  2. — Ընտրութիւն ի նախաձեռնութեան Դիւանի պակասեալ միանդամի .
  3. — Յայտարարութիւն ի Դիւանի յաղաղօ կաթողիկոսական երկր ընտրելեաց Հայոց Թուրքիոյ .
- Բ. — Ինդիր պատգամաւորութեան վասն կաթողիկոսական ընտրութեան .

